ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
"Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ"

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am


Հաշվետվություն թիվ 142, 10.01.2017թ.

| | | | |
|---|---|---|---|
| տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ | բաժնետոմս, | պարտատոմս | պարտատոմս |
| արժեթղթերի քանակը՝ | 1,760,731 հատ, | 40,000 հատ | 280.000 հատ |
| արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ | 5,000 ՀՀ դրամ, | 10,000 ՀՀ դրամ | 25 ԱՄՆ դոլար |

*"Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը":*

ստորագրող անձինք՝

| | | | |
|---|---|---|---|
| **Կարեն Հակոբյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական վարչության պետ** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Զարուհի Մելքոնյան** | **Վարչության անդամ, Միջազգային գործառնությունների վարչության պետ** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Սուրեն Կարապետյան** | **Վարչության անդամ, Կորպորատիվ գործառնությունների դեպարտամենտի պետ** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Տիգրան Գալստյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Բագրատ Ճզմաչյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
| **Դավիթ Հարությունյան** | **Վարչության անդամ, Գործադիր տնօրենի տեղակալ** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| | | | |
|---|---|---|---|
| **Աշոտ Օսիպյան** | **Վարչության նախագահ, Գործադիր տնօրեն** | | 10.01.17 |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |

10 հունվարի 2017թ.

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

«ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» Բաց Բաժնետիրական Ընկերությունից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ Բաց Բաժնետիրական Ընկերությանը փոխանցված մի շարք մասնաճյուղերի կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու և նոր մասնաճյուղ ստեղծելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 18/01Լ որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 Էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – 18/01L
Դաս: ՆՔ
«28» դեկտեմբերի 2016թ.

**ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**«ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված $21^{6}$-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Նոր խմբագրությամբ հաստատել «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունից ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությանը փոխանցված
   1) Ավան մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 1-ի,
   2) Ավան 1 մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 2-ի,
   3) Մալաթիա մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 3-ի
   4) Գյումրի (նոր անվանումը Գյումրի 2) մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 4-ի,
   5) Գյումրի 1 (նոր անվանումը Գյումրի 3) մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 5-ի,
   6) Արմավիր (նոր անվանումը Արմավիր 1) մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 6-ի,
   7) Էրեբունի (նոր անվանումը Էրեբունի 1) մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 7-ի,
   8) Վանաձոր (նոր անվանումը Վանաձոր 2) մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 8-ի,
   9) Արցախ մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 9-ի:

2. Ստեղծել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջարգացման մասնաճյուղ՝ ՀՀ, 0015, Երեւան, Պարոնյանի 21/1 հասցեում:
3. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջարգացում մասնաճյուղի կանոնադրությունը՝ համաձայն Հավելված 10-ի:
4. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ջարգացում մասնաճյուղի 2016-2018թթ.-ի գործունեության տնտեսական ծրագիրը, այդ թվում՝ առաջիկա երկու տարիների կանխատեսվող հաշվեկշիռը, եկամուտների ու ծախսերի նախահաշիվները՝ համաձայն Հավելված 11-ի:
5. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Ա.Օսիպյանին ապահովել՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում՝
   1) սույն որոշման 1-ին կետում նշված մասնաճյուղերի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունների գրանցման հետ կապված գործընթացը,
   2) Ջարգացման մասնաճյուղի գրանցման հետ կապված գործընթացը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի համատեղ ընդհանուր ժողովի կողմից 27.12.2016թ.-ին հաստատված ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրությունը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

**Խորհրդի նախագահ՝** **Բ. Բեգլարյան**